ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավանի համայնքի ղեկավար
պարոն Հ. ԲԱԼԱՍԱՆՅԱՆԻՆ

Դ Ի Մ Ո Ւ Մ

Հարգելի պարոն Բալասանյան

Ձեզ են դիմում ՀՀ Կոտայքի մարզի Նուռնուս և Բյուրեղավան համայնքների բնակիչները «Առողջ Սունկ» ՍՊԸ Բյուրեղավանի մասնաճյուղի գործունեության իրականացման արդյունքում համայնքի բնակչությանը վնաս պատճառելու վերաբերյալ:

Հուսով ենք, որ ժողովրդի կողմից առաջադրված և նշանակված Վարչապետը և նորանշանակ Կառավարությունը այս անգամ կվերացնեն անարդարությունը և կապահովեն մարդկանց Սահմանադրական իրավունքները:

ՀՀ վարչապետի կողմից կոչ է արվել բարձրացնել հասարակական հնչեղություն ունեցող հարցեր և դիմել անմիջապես Ձեզ՝ պետական մարմինների կողմից կամայականությունների, ներդրումների խոչընդոտման, արտագաղթի խթանմանը նպաստող, կոռուպցիոն երևույթների դեպքում:

ՀՀ Կոտայքի մարզի Նուռնուս և Բյուրեղավան համայնքների բնակիչները 2014 թվականից սկսած տառապում են «Առողջ Սունկ» ՍՊԸ Բյուրեղավանի մասնաճյուղի՝ ՀՀ քաղաքաշինական նորմերի (ՍՆ N245-71) կոպիտ խախտումներով իրականացվող արտադրական գործունեության պատճառով առաջացող թունավոր արտանետումներից, գարշահոտությունից, բեռնատար մեքենաների աղմուկից և փոշուց:

2014 թվականից ի վեր համայնքների բնակիչները դիմել են պետական տարբեր մարմիններին՝ ՀՀ ոստիկանություն, ՀՀ Կոտայքի մարզպետարան, տեղական ինքնակառավարման մարմիններ, ՀՀ քաղաքաշինության, բնապահպանության, արտակարգ իրավիճակների և տարածքային կառավարման նախարարություններ, ՀՀ կառավարություն, սակայն ոչ մի արդյունքի չհասնելով անգամ կազմակերպել են ցույցեր և փակվել է «Առողջ Սունկ» ՍՊԸ Բյուրեղավանի մասնաճյուղ տանող ճանապարհը՝ պահանջելով հարցին լուծում տալ և տեղափոխել արտադրամասը՝ ապահովել ՀՀ քաղաքաշինական նորմերին համապատասխան սանիտարական գոտու պահպանումը (բնակավայրից 1-3 կիլոմետր, այնինչ ներկայումս այն կազմում է 100 մետրից էլ պակաս):

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՄՏԻՑ N Ղ-679/18
«23» 05 2018 թ.

Արձագանքելով խնդրին, 2015 թվականի օգոստոս ամսին համայնքներ և արտադրամաս այցելեցին ՀՀ նախկին վարչապետ Հովիկ Աբրահամյանը և Կոտայքի ներկայիս մարզպետ Կարապետ Գուլոյանը: ՀՀ Կոտայքի մարզպետի որոշումով ստեղծվեց հատուկ հանձնաժողով, որի մեջ ներառվեցին ներկայացուցիչներ, ինչպես մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումներից, այնպես էլ՝ ՀՀ առողջապահության, բնապահպանության, արտակարգ իրավիճակների նախարարությունների, ՏԻՄ մարմիններից, բնակիչներից և «Առողջ Սունկ» ՍՊԸ-ից, որի նպատակն էր բազմակողմանի ուսումնասիրել խնդիրը և տալ եզրակացություններ:

Հանձնաժողովը մանրամասն դիտարկումներից և ուսումնասիրություններից հետո, աշխատանքների արդյունքները ամփոփող նույն թվականի սեպտեմբերի 19-ին կայացած նիստում ընդունված արձանագրությամբ անդրադարձել է ինչպես վերոնշյալ քաղաքաշինական նորմի կիրառելիությանը, այնպես էլ՝ իրականացված ստուգումներին, փորձաքննությունների արդյունքներին, նաև, նիստի ժամանակ ներկայացվել են եզրակացություններ և մշակվել առաջարկներ:

Մասնավորապես, **ի գիտություն է ընդունվել մթնոլորտային աղտոտման բազմակի փաստերի մասին տեղեկատվությունը, անդրադարձ է կատարվել ներկայացված լաբորատոր փորձաքննության արդյունքներին, որոնք, մեջբերում եմ. "չեն ներառել բոլոր քննվող էլեմենտների փորձաքննությունը": Առաջարկվել է դիմել ՀՀ բնապահպանաության նախարարություն ստանալու իրականացված հետազոտության արդյունքները: Առաջարկվել է նաև ստեղծել մշտադիտարկման համակարգ, որը անմիջապես կարձագանքի օդում մթնոլորտային վտանգավոր էլեմենտների և նյութերի առկայությունը:**

Ավելին՝ **Բյուրեղավանի քաղաքապետի տեղակալ Միշա Եղիազարյանի կողմից նշվել է, որ որևէ շինթույլտվություն առկա չէ և չի տրամադրվել համայնքի կողմից տվյալ տնտեսվարող սուբյեկտին: Առաջարկվել է համապատասխան պետական մարմիններին ուսումնասիրություն կատարել տնտեսվարողի կողմից շինարարության և նախագծման փաստաթղթերի առկայության և համապատասխանության վերաբերյալ:**

Հանձնաժողովի հիմնական դիտարկումները վերաբերում էին ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի վարչական տարածքում գործող "Առողջ Սունկ" ՍՊԸ սնկի հումքի արտադրամասի՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված գործող նորմատիվներին, կարգերին և

դրույթներին համապատասխանելու խնդրին: Այս մասով Հանձնաժողովը միաձայն որոշում է կայացրել և հաստատել են հետևյալյալը.

1. Սահմանել, որ տվյալ արտադրամասի շահագործումը հակասում է արտադրական ձեռնարկությունների շահագործման նորմերին (ՇՀ 245-71)

2. Առաջարկել տնտեսվարողին մեկամսյա ժամկետում Հանձնաժողովին ներկայացնել արտադրամասի տեղափոխման պլան և ժամանակացույց՝ այն ավարտին հասցնելով առավելագույնը 6 ամսվա ընթացքում:

3. Տնտեսվարողի կողմից առաջին կետի վերաբերյալ առարկայական հակափաստարկներ ունենալու դեպքում՝ 10-օրյա ժամկետում ներկայացնել այն Հանձնաժողովի նախագահին: Հանձնաժողովի նախագահը, քննելով ներկայացված հակափաստարկները կարող է որոշում կայացնել և ներկայացնել դրանք Հանձնաժողովի նիստին, որի արդյունքով ներքոհիշյալ կետերը կարող են փոփոխություններ կրել: Մինչ Հանձնաժողովի կողմից հակափաստարկների ընդունումը ներքոհիշյալ կետերը մնում են անփոփոխ:

4. Առաջարկել ՀՀ Կոտայքի մարզպետին և ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությանը ներկայացնել տնտեսվարողին այն տնտեսական օբյեկտների ցանկը, որտեղ հնարավոր է տեղափոխել նշված արտադրությունը:

5. Առաջարկել տնտեսվարողին մինչև արտադրամասի տեղափոխման ավարտը իրականացնել կորպորատիվ-սոցիալական պատասխանատվությունից բխող և հասցրած վնասը փոխհատուցելու նպատակով համայնքային աջակցման ծրագրեր՝ նպաստելով շահառու համայնքների ենթակառուցվածքների զարգացմանը: Այս կետով նախագծվող ծրագրերը մեկամսյա ժամկետում ներկայացնել ՀՀ Կոտայքի մարզպետի, Բյուրեղավանի քաղաքապետի, Նուռնուս համայնքի ղեկավարի և շահառու բնակիչների ներկայացուցիչներից կազմված հանձնաժողովի հաստատմանը:

Այնուամենայնիվ, ՀՀ տարբեր պետական մարմիններ հետևողականորեն աճպարարություններ են կիրառել. մեկը նշում է, որ տվյալ կազմակերպությունը ընդհանրապես չի իրականացնում քաղաքաշինական գործունեություն և այդ պատճառով չի կարելի օգտվել քաղաքաշինական նորմերից, մյուսը՝ որ այն հետևողականորեն աշխատանքներ է տանում արտանետումները կարգավորելու և նվազեցնելու,

կազմակերպության ներկայացուցիչները ցինիկորեն նշում են, որ ցանկացած տեղ էլ հոտ կարող է լինել, առանց նշելու, որ հոտը ընդհամենը արտանետումների ցուցիչ է:

Կազմակերպությունում չկան և սեփականատերը հետևողականորեն հրաժարվում է տեղադրել իրական ժամանակում արտանետումների մակարդակը վերահսկող չափիչ սարքեր, բնակիչների մշտական ահազանգերի դեպքում (911) ծառայությունից պատասխանում են, որ չունեն շարժական լաբորատորիա և այդ պահին հնարավոր չէ չափել որքան հավելյալ արտանետումներ են եղել: Հատուկ հրավիրված լաբորատոր գործիքներով էլ չափումներ իրականացվում են այն ժամանակ, երբ արտանետումներ չեն լինում. . .

Իսկ բնակիչները, խեղդող արտանետումները իրենց վրա զգալով, արագ փորձում են բակերից հետ կանչել իրենց երեխաներին և տարեց մարդկանց, որոնք ամբողջապես զգում են արտանետումների բույրը: Իսկ գիշերները բնակիչները ստիպված են լինում քնել փակ պատուհաններով՝ ուղղակի չղեղդվելու համար:

Մարդիկ առերևույթ զգում են այդ արտանետումները, խեղդվում, այդ իսկ պատճառով՝ հրաժարվում օգտվել իրենց սեփականությունից, որոշ դեպքերում՝ նույնիսկ արտագաղթում են: Բնականաբար՝ նվազում են նաև ներդրումները:

Տեղեկացնենք, որ «Առողջ Սունկ» ՍՊԸ Բյուրեղավանի մասնաճյուղի կողմից իրականացվող գործունեությունը հակասում է «Մթնոլորտային օդի պահպանության մասին» << օրենքի 15-րդ հոդվածի պահանջին, մասնավորապես. «Ձեռնարկությունները, հիմնարկներն ու կազմակերպությունները, որոնց գործունեությունը կապված է մթնոլորտային օդն աղտոտող նյութերի արտանետումների հետ, պարտավոր են տեխնիկական, տնտեսական, կազմակերպական և այլ կարգի միջոցառումներ իրականացնել արտանետման թույլտվություններում նախատեսված պայմանների և պահանջների կատարումն ապահովելու համար, միջոցներ ձեռնարկել աղտոտող նյութերի արտանետումները նվազեցնելու ուղղությամբ, ապահովել բնապահպան կառույցների, սարքավորումների սարքինությունը, դրանց անընդմեջ և արդյունավետ աշխատանքը, հետևողականորեն բարելավել տեխնոլոգիական պրոցեսները՝ ներդնելով լավագույն հասանելի տեխնոլոգիաներ, ինչպես նաև սահմանված կարգով իրականացնել մթնոլորտային օդ արտանետվող նյութերի քանակի և բաղադրության մշտական հաշվառում և չափումներ:

Մթնոլորտային օդի պահպանության միջոցառումների իրականացումը չպետք է հանգեցնի բնության մյուս ոլորտների աղտոտմանը:»

Բացի այդ նշյալ կազմակերպության կողմից իրականացվող գործունեությունը հակասում է մի շարք ՀՀ առողջապահության նախարարի կողմից հաստատված հրամանների, մասնավորապես՝ ՀՀ առողջապահության նախարարի 11.09.14թ. «Օդի նախապատրաստման, մաքրման և զտման համար սարքավորումներին ու նյութերին ներկայացվող սանիտարահամաճարակաբանական և հիգիենիկ պահանջներ» N 2.1.7.017-14 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին» N 42-Ն, 24.01.12թ. «Կազմակերպությունների աշխատատեղերում աշխատանքային գոտու օդում քիմիական նյութերի սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները» N 2.2.5-004-10 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին» N 27-Ն հրամաններին:

Բնակիչները պահանջում են, որպեսզի պաշտպանվեն իրենց իրավունքները, իրենց գույքի օգտագործումը, ակնկալում են, որ պետական մարմինները դադարեն ոչ ճիշտ և ի վնաս բնակիչների պատասխանների տրամադրումը:

Խնդրում ենք Ձեզ, հաշվի առնելով ՀՀ Սահմանադրության 85-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, միջոցներ ձեռնարկել օրենքով սահմանված կարգով դադարեցնելու «Առողջ Սունկ» ՍՊԸ Բյուրեղավանի մասնաճյուղի գործունեությունը:

Հարգանքով՝

Նուռնուս և Բյուրեղավան համայնքների մի խումբ բնակիչների անունից՝

Անուշ Ղազարյան

Հեռ. +37491748317

ք. Երևան, Վարդանանց 104/3 տուն

anush.ghazaryan.77@mail.ru

23.05.2018թ.

[illegible]

Բյուրեղավան [illegible] 47/47 [illegible]

[illegible]

077346580

23.05.18